ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2079-Ա/2 **«06» հոկտեմբերի 2023 թ.**

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մայիսի 12-ի N 52-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականին տեղի ունեցած Եվրոպայի ինֆորմատիկայի պատանեկան օլիմպիադայի եզրափակիչ փուլի մրցանակակիրներին տրամադրել անվանական կրթաթոշակ՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը /պետ՝ Ա. Թադևոսյան/՝ համապատասխան ուսումնական հաստատություններին տրամադրել ֆինանսական միջոցներ սահմանված կարգով՝ կրթաթոշակ տրամադրելու համար:

3. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կ. Մանուկյան/՝ սահմանված կարգով ապահովել հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում:

4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /պետ՝ Թ. Սարգսյան/:

5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Սվաջյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
6 հոկտեմբերի 2023թ. N 2079-Ա/2 հրամանի

ՑՈՒՑԱԿ

2023 թվականին տեղի ունեցած Եվրոպայի ինֆորմատիկայի պատանեկան օլիմպիադայի կրթաթոշակ ստացողների

հ/հ	**Ազգանուն**	**Անուն**	**Կրթօջախ**	**Դաս.**	**Առարկա**	**Մրցանակ**
1.	Գրիգորյան	Ալեքս	«Քվանտ» վարժարան	10	ինֆորմատիկա	ոսկի
2.	Ղազարյան	Ալեքսանդր	Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	10	ինֆորմատիկա	արծաթ
3.	Աբրահամյան	Վահան	Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	10	ինֆորմատիկա	բրոնզ